«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Արժեքային համակարգի ձևավորումը «Ես և շրջակա աշխարհը» առարկայի դասավանդման ընթացքում
ԱՌԱՐԿԱ	Ես և շրջակա աշխարհը
ՀԵՂԻՆԱԿ	Լուսինե Պողոսյան
ՄԱՐԶ	Շիրակ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Սառնաղբյուրի միջնակարգ դպրոց

Բովանդակություն

Ներածություն……3
ԳԼՈՒԽ 1. ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑ
1.1. Արժեքային համակարգ……5
1.2. Էկոլոգիական դաստիարակությունը «Ես և շրջակա աշխարհը» առարկայի դասավանդման ընթացքում ……8
ԳԼՈՒԽ 2. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԽԱՂԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ……11
Եզրակացություն……14
Օգտագործված գրականության ցանկ……16

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մեր երկրում աշակերտների արժեքային համակարգի ձևավորումը ներառված է ՀՀ պետական չափորոշիչում՝ որպես հենց կրության բովանդակային բաղադրիչ։ Յուրաքանչյուր ուսումնական առարկայի մասով սովորողների պատրաստվածությունը ներկայացվող գիտելիքային պահանջների մեջ առանձին կերպով նաև նշվում է արժեքները և դրանց ձևավորումը, որոնք պետք է տա դպրոցը։ Հանրակրթական չափորոշիչը ենթադրում է սանի զինում այնպիսի գիտելիքներով, կարողություններով և հմտություններով, որոնք նրան հնարավորություն կտան համընթաց քայլել մարդկության արագ առաջընթացի հետ։

Թեմայի արդիականությունը: Արդի ժամանակաշրջանում երկիր մոլորակը հայտնվել է ճգնաժամային իրավիճակում, խախտվել են կենսոլորտի ինքնակազմակերպման, ինքնակառավարման, ինքնավերականգման բոլոր հիմնական հատկանիշները, վտանգված է քաղաքակրթության երկարատև գոյության հնարավորությունը։ Էկոլոգիական ստեղծված իրավիճակի կանխման գործում վճռական դեր ունի էկոլոգիական կրթությունն ու դաստիարակությունը, որի հիմքը դրվում է տարրական դպրոցում։

Թեմայի արդիականությունը պայմանավորված է էկոլոգիական դաստիարակության իրականացման գործընթացում առկա որոշ հիմնախնդիրների ուսումնասիրման անհրաժեշտությամբ, որը տարրական դպրոցում առավել հրատապ նշանակություն է ձեռք բերում։

«Ես և շրջակա աշխարհը» առարկայի շրջանակներում աշակերտը ծանոթանում է մարդու և շրջապատի միջև գոյություն ունեցող փոխկախվածությանը,հավաքում է տեղեկատվություն թե ինչպես է ներգործում շրջապատը մարդու կյանքի ընթացքի վրա և ընդհակառակը՝ ինչպես է փոխվում արտաքին աշխարհը մարդու ազդեցության հետևանքով, ծանոթանում են բնական հարստությունների բազմազանությանը, դրանց

ռացիոնալ կիրառման ուղիներին և կենցաղային մնացորդների ճիշտ օգտահանության մեթոդներին: Աշակերտը ծանոթանում է առողջ և անվտանգ կյանքի կանոններին:

Նպատակները՝

- սովորողներին ծանոթացնել իրենց շրջապատող աշխարհին, այնտեղ կատարվող բնական-հասարակական երևույթներին ու օբյեկտներին,
- պատասխանատվություն զգալ սեփական անձի, հասարակության և շրջապատի նկատմամբ,
- նպաստել սեփական երկրի պատմամշակութային արժեքների ժառանգորդը լինելու գիտակցմանը,
- ձևավորել առողջ ապրելակերպին նպաստող վարքագիծ, բնության հանդեպ հոգատար վերաբերմունքի անհրաժեշտության գիտակցում:

Խնդիրները՝

- ուսումասիրելով էկոլոգիական հիմնախնդիրները՝ մշակել արդյունավետ մեթոդներ,
- աշակերտներին էկոլոգիական գիտելիքների հաղորդում և յուրացում,
- բնության հետ շփվելու պահանջմունքի ձևավորում,
- բնության և մարդու նկատմամբ արժեքային կողմորոշման և վերաբերմունքի ձևավորում,
- էկոլոգիապես առողջ ապրելակերպով անհատի ձևավորում:

ԳԼՈՒԽ 1. ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑ

1.1. Արժեքային համակարգի էությունը

«Արժեհամակարգ» հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է բավական լայն շառավիղով: Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար: Արժեքների թվարկված համախմբերից որևէ մեկին գերապատվություն տալը կնշանակեր խնդրին ոչ մանկավարժական մոտեցում: Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, որոնց թվում, այնուամենայնիվ, արժեքների ձևավորման առումով չափազանց մեծ է հումանիտար ոլորտի ուսումնական առարկաների դերը: Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է հայրենասիրության, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում: Իսկ ակտիվ ճանաչողական գործունեության պայմաններում ձևավորված գիտելիքները աշակերտների մոտ վերածվում են համոզմունքների և կարողությունների: Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակույթային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն: Հաշվի առնելով բազմաթիվ այս և այլ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում

սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները:

Արժեքների բուրգի գագաթին գտնվող նվիրական ու մեծագույն արժեքը՝ հայրենասիրությունն է, որը տարրական դասարանում լավագույն կերպով մատուցվում է մայրենիի, ես և շրջակա աշխարհը դասընթացների ժամանակ: Այն մեծագույն արժեքն է, որ հարգանք ու պատկառանք է հարուցում, նույնիսկ երբ դրսևորվում է հակառակորդի կամ թշնամու մոտ: Ի դեպ, յուրաքանչյուր ուսուցիչ ունի որոշակի հեղինակ կամ ստեղծագործություն, որը նրան ամենադյուրին կերպով է օգնում իր մանկավարժական խնդիրները լուծելու, տվյալ դեպքում՝ հայրենասիրության բարձրագույն արժեքը սաների հոգիներում սերմանելու համար:

«Նոր սերնդի արժեհամակարգի ձևավորման, կրթության և դաստիարակության գործում լուրջ անելիքներ ունի բնավ հայ դպրոցը, որի գերնպատակն է կերտել բարոյական, ազգային արժեքներով օժտված, ազգային նկարագիր ունեցող սերունդ»: [2, էջ 65]

Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող գործոններից են ավանդական միջոցները, այսինքն՝ աշակերտի մեջ աշխարհի նկատմամբ վերաբերմունքի և հասարակության հետ հարաբերության, սեփական անձի նկատմամբ վերաբերմունքի ձևավորումը ընտանիքի և սոցիալական միջավայրի միջոցով: Սակայն սովորողների կողմից այդ միջավայրին բնորոշ արժեքների, կանոնների, չափանիշների, հայացքների յուրացումը միշտ չէ, որ համապատասխանում է հասարակության կողմից ընդունված արժեքներին և խրախուսելի չափանիշներին: Ավանդական միջոցների յուրացումը լինում է չգիտակցված՝ վարքի ընդունված կաղապարներն ընդօրինակելու միջոցով: Այս առումով իրավացի է Մ. Մոնտենը. «…Մենք որքան ասես կարող ենք պնդել մերը, սակայն սովորույթն ու համընդհանուր կանոնները մեզ քարշ են տալիս իրենց ետևից»: [4, 22]

Աշակերտի արժեքների ձևավորման խնդիրները բնականաբար լուծվում են ոչ միայն ընտանիքում, այլ նաև ուսումնական հաստատություններում՝ ուսումնադաստիարակչական գործընթացի միջոցով: Ուսուցման դաստիարակչական ներգործությունը օբյեկտիվ օրինաչափություն է, որովհետև աշակերտների համար

ուսուցումը գործունեության հիմնական տեսակն է, դրա համար էլ այն կարևոր դեր է կատարում նրանց անձի ձևավորման գործում:

Յուրաքանչյուր դասի ժամանակ ուսուցիչը որոշակի դաստիարակչական խնդիրներ է լուծում՝ հաշվի առնելով տվյալ առարկայի և թեմայի ուսումնասիրման հիմնական խնդիրները, որոնք ներկայացված են առարկայական ծրագրերում: Նա առանձնացնում է ընդհանուր դաստիարակչական խնդիրները, որոնք առանձին աշակերտների մոտ հաճախակի են դրսևորվում: Ուսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի ընտրության միջոցով (անհատական, խմբային, էքսկուրսիա, դասղեկական ժամ, արտադասարանական միջոցառումներ, խաղեր և այլն) առավել արդյունավետ է դարձնում աշակերտների արժեհամակարգային դաստիարակչական խնդիրների լուծումը: Օրինակ՝ խմբային աշխատանքի ժամանակ աշակերտները սովորում են ուշադրությամբ վերաբերվել միմյանց, միասին հաղթահարել դժվարությունները, միասին ձեռք բերել հաջողություններ, լսել հակադիր կարծիքներ, ընդօրինակել միմյանց և այլն: Հասակակիցների խմբում աշակերտն ավելի ազատ է արտահայտում իր մտքերն ու դատողությունները, գործում է անկաշկանդ, ինչն էլ նպաստում է ուսուցման արդյունավետ կազմակերպմանը: Անհատական աշխատանքում դաստիարակվում է աշակերտների ինտելեկտուալ պատրաստականությունը դժվարությունները հաղթահարելու գործում, ձևավորվում են համառության, ինքնակազմակերպման և ինքնավերահսկման ընդունակություններ: «Հատկապես դեռահասների առանձնահատուկ զգացմունքայնությունը, ինքնասիրությունը, որ հաճախ արտահայտում է նրանց ինքնահաստատման և հասուն երևալու ձգտումը, մանկավարժից պահանջում է անհրաժեշտ նրբանկատություն, հարգանք դեռահասի անձի նկատմամբ» [5, 65]:

1.2. Էկոլոգիական դաստիարակությունը «Ես և շրջակա աշխարհը» առարկայի դասավանդման ընթացքում

Մարդկային քաղաքակրթության պատմությունը թևակոխել է մի այնպիսի ժամանակաշրջան, որի կարևորագույն և բնորոշ դրսևորումներից մեկը անհանգստացնող գլոբալ տեխնածին գործընթացներն են: Վերջիններս կենսոլորտը դարձրին համընդհանուր ուշադրության առարկա, և այսօր սրությամբ դրվել է բնության պահպանման, մարդու և բնության փոխազդեցության, հավասարակշռության հաստատման հիմնահարցը՝ գլոբալ մասշտաբով:

Ուստի պատահական չէ, որ այժմ կենսոլորտը դարձել է հետազոտության առարկա ոչ միայն բնագիտական, այլև հումանիտար և տեխնիկական գիտությունների համար: Էկոլոգիա հասկացության հիմքում ընկած է բնությունը, նրա հավասարակշռության պահպանությունը, որը շատ վաղուց է սկսված:

Երեխան որքան շուտ ծանոթանա էկոլոգիական հիմնական հասկացություններին, այնքան ճիշտ կդասավորվեն նրա հարաբերությունները շրջակա բնական միջավայրի հետ:

Էկոլոգիական դաստիարակության նպատակը շրջապատող միջավայրի նկատմամբ դպրոցականների պատասխանատվության ձևավորումն է: Գոյություն ունեն բնության պահպանության բազում ձևեր, դրանցից մեկն էլ մանկավարժականն է, որը անձի մեջ դաստիարակում է պատասխանատու վերաբերմունք բնության նկատմամբ:

Էկոլոգիական դաստիարակությունը ուղղված է կրտսեր դպրոցականի մոտ բնության նկատմամբ հարգալից վերաբերմունքի, ինչպես նաև հոգատար խնամքին և պահպանմանը: Այս բոլորը երեխայի մոտ պետք է ձևավորել կրտսեր դպրոցական տարիքում՝ տարբեր առարկաների, այդ թվում նաև «Ես և շրջակա աշխարհը» առարկայի դասավանդման ընթացքում:

Տարրական դպրոցի երեխաների մոտ բնության նկատմամբ հոգատարություն, սեր, ուշադրություն ձևավորելու համար անհրաժեշտ է կազմակերպել էքսկուսիաներ, դասեր և արտադասարանական միջոցառումներ: Յուրաքանչյուր թեմայի ուսումնասիրման ժամանակ պետք է կապ ստեղծել մեր ժամանակներում և մեր հանրապետությունում էկոլոգիական իրավիճակի հարցերի միջև: Երեխաները կկարողանան սովորել բնության մեջ վարքի տարրական կանոնները: «Դասերի ժամանակ տարվող աշխատանքներն իրենց արտացոլանքն են գտնում արտաուսումնական միջոցառումներում՝ բնական նյութերից ձեռքի աշխատանքների պատրաստում, բնության մասին նկարների ստեղծում, բերքի, ծաղկի տոների կազմակերպում և այլն»: [3, էջ24-25]

«Ես և շրջակա աշխարհը» ուսումնական առարկան կոչված է օգնելու երեխային ճանաչել իրեն ոչ միայն որպես անհատ, այլև որպես հասարակության մասնիկ: Դասընթացի օգնությամբ կրտսեր դպրոցականը սկսում է «կառուցել» իր սեփական աշխարհը՝ գծելով իր պատկերացումների, զգացողությունների, մտքերի ու նախասիրությունների շրջանակը: Թեմաներն ընտրված են այնպես, որ աշակերտի մեջ քայլ առ քայլ ձևավորվի այն գիտակցությունը, որ ինքն աշխարհում մենակ չէ, որ իր սեփական ցանկություններից ու երազներից այն կողմ կան ուրիշ մարդիկ, որոնք իրեն նման չեն, և , ինչպես ինքը, անկրկնելի անհատականություն են, ուստի նույնպես արժանի են հարգանքի: Կրտսեր դպրոցականի պատկերացումները ընդլայնվում են շրջակա աշխարհի հետ ծանոթացման շնորհիվ: Երեխաներն ուսումնասիրում են իրենց բակը, քաղաքը, մարզը, հայրենիքը, նրա ներկան և անցյալը, պատմամշակութային արժեքները, ծանոթանում են տարբեր մասնագիտությունների տեր մարդկանց, սովորում են հասարակական վայրերում օրինակելի վարքագիծ դրսևորել, ձեռք են բերում հաղորդակցական հմտություններ, առողջ և անվտանգ ապրելակերպի համար անհրաժեշտ կարողություններ: Տարրական դպրոցում «Ես և շրջակա աշխարհը» առարկայից ձեռք բերված գիտելիքները սերտորեն առնչվում են մայրենիին, մաթեմատիկային և այլ ուսումնական առարկաներին: Շատ կարևոր է ի նկատի ունենալ, որ այս դասընթացի արդյունքում ձեռք բերված գիտելիքները, կարողությունները և հմտությունները արժեքավոր են որպես հենք նոր գիտելիքների համար:

«Ես և շրջակա աշխարհը» ինտեգրված դասընթացը հնարավորություն է տալիս ձևավորել բարոյական, էկոլոգիական արժեքներ, որոնք բնութագրում են բնության և հասարակության, հայրենի եզերքի նկատմամբ կրտսեր դպրոցականների վերաբերմունքը: Բնությունը ոչ միայն ուսումնասիրության օբյեկտ է, այլև սովորողների մտավոր, ֆիզիկական, բարոյական զարգացման աղբյուր: Սերը բնության, կյանքի հանդեպ ծնում է մարդասիրական ամենաբարձր զգացմունքներ: Տարրական կրթության համակարգում «Ես և շրջակա աշխարհը» ուսումնական առարկայի կրթական բաղադրիչն ունի իր ուրույն տեղը, քանի որ միավորում է երկու կրթական ոլորտ՝ բնագիտական և հասարակական: Այս առումով դասընթացի հիմնական նպատակը սովորողների սոցիալական փորձի, էկոբարոյական վարքագծի ձևավորումն է, «մարդ-բնություն-հասարակություն» համակարգում գործունեության ձևերի յուրացումը: Դասընթացի ուսուցման գործընթացում սովորողները ձեռք են բերում համագիտական գիտելիքներ, սովորում են համեմատել, ընդհանրացնել, համակարգել, եզրահանգումներ ձևակերպել և այլն:

«Ես և շրջակա աշխարհը» ինտեգրված դասընթացի ուսուցման գործընթացը միտված է.

- սովորողի ընդհանուր մշակույթի ձևավորմանը,
- բնության նկատմամբ հարգանքի, հոգատար վերաբերմունքի ձևավորմանը,
- դասընթացի էկոլոգիական ուղղվածության ապահովմանը,
- հայրենի բնաշխարհի մասին գիտելիքների յուրացման ճանապարհով հայրենիքի պատմության իմացությանը, նրա հանդեպ հոգատար վերաբերմունքի և պատասխանատվության ձևավորմանը:

Ինտեգրման սկզբունքի համաձայն՝ անհրաժեշտ է միավորել, համադրել տարբեր գիտաճյուղերի գիտելիքները: Ժամանակակից դիդակտիկայում գիտելիքների ինտեգրումը ենթադրում է գիտելիքների համադրում, միավորում, ինչը նպաստում է աշխարհի ամբողջական պատկերի ընկալմանը:

Այսպիսով, «Ես և շրջակա աշխարհը» առարկայի առաջին դասից՝ կապ է ստեղծվում հասարակության և բնության միջև որը դառնում է անբաժանելի օրգանական ամբողջություն, իսկ ինքը՝ սովորողը, այդ ամբողջության մի մասնիկ: Սա հնարավորություն

է տալիս վաղ հասակից ստեղծել մանկական ամբողջական բարոյական և էկոլոգիական գաղափարներով անհատ, որը պատկերացնում է մարդու ազդեցությունը շրջակա միջավայրի հանդեպ՝ թե՛ դրական, թե՛ բացասական իմաստով։

ԳԼՈՒԽ 2. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԽԱՂԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

«Բնությանն առնչվող հարցերը հաճախ խրթին և անբացատրելի են թվում երեխային, քանի որ նա դրա մասին խոսելու առիթ գրեթե չի ունենում։ Մինչդեռ խաղային իրավիճակներում հնարավորություն է ստեղծվում մտածել, արտահայտել միտքը, կարևորել իր անձը, լսել այլ մեկնաբանություններ, ուսումնասիրել տարբեր երևույթներ ու առարկաներ։ Այդ կերպ ձևավորվում է կյանքի նկատմամբ սեփական դիրքորոշումը»։

Խաղերը և վարժանքները նպաստում են երեխաների դիտողականության, միմյանց և բնության հետ ներդաշնակ շփվելու ու հաղորդակցվելու, փոխոգնության և համագործակցության կարողությունների զարգացմանը։ Դրանց միջոցով ընդլայնվում է երեխայի աշխարհընկալումը, հարստանում է երևակայությունը, հղկվում է ներըմբռնողականությունը։ [1, էջ99]

Խաղից հետո անհրաժեշտ է անդրադարձ կատարել դրան։ Խմբային հարցման միջոցով կատարվում է խաղի նպատակի վերհանում, երեխաների միջոցով վերլուծվում է ընթացքը, և կարևորվում են ձեռքբերումները։

Ստեղծագործական խաղերն օգնում են երեխաներին՝ մտածելու իրենց ամենօրյա հոգսերի մասին և վերլուծելու դրանք։

Բնապահպանական խաղեր

Ի՞նչ կլինի եթե…

Երեխաները բաժանվում են խմբերի։ Ամեն մի խմբի առաջարկվում է որևէ հիմնախնդիր։ Դրանք գրառվում են գրատախտակին։ Այսպես, օրինակ՝

- Անտառահատում,
- Կլիմայի տաքացում,
- Անապատացում,
- Որսագողություն,
- Ջրամբարների աղտոտում։

Խմբերն ընտրում են հիմնախնդիրները։ Մնջախաղի միջոցով ներկայացվում են տվյալ հիմնախնդրի հետևանքով առաջացած երևույթները (3-ից ոչ պակաս)։

Մյուս խմբերը պիտի գուշակեն, թե որ հիմնախնդիրն է ներկայացված։

Ավարտի՛ր նախադասությունը

- Երբ դիպչում եմ մաքուր, զուլալ ջրի, զգում եմ ……։
- Ես ոտաբոբիկ քայլում եմ հողի վրա, և ինձ թվում է, թե ոտքերս……։
- Այս ծառն այնքան մեծ է, որ երբ նայում եմ նրա գագաթին, ինձ թվում է……։
- Եթե ես տեսնում եմ վիրավոր կենդանի, ուզում եմ……։
- Երբ անտառում նկատում եմ կացնահարված ծառ, մտածում եմ……։

Ինչպե՞ս մաքրել շրջապատը

Երեխաներին առաջարկում ենք զույգերով խորհրդակցել և գրանցել այն ամենը, ինչն իրենց կարծիքով աղբ է համարվում։

Յուրաքանչյուր զույգ ներկայացնում է իր գրառումները։ Ամենակարևորները գրվում են գրատախտակին։ ՈՒսուցիչն աշակերտների օգնությամբ առանձնացնում է ոչ պիտանի իրերի ցանկը (թուղթ, ապակի,պլաստմաս և այլն)։

Դասարանը բաժանվում է խմբերի։ Յուրաքանչյուր խմբի հանձնարարվում է կազմել այն օգտակար իրերի ցանկը, որոնք կարելի է պատրաստել տարբերակված աղբակույտից։

Ինքնագնահատման աղյուսակ

Երեխաներին առաջարկում ենք գծագրել երեք սյունակից բաղկացած աղյուսակ, սյունակների համար որպես խորագրեր նշել «միշտ», «երբեմն» և «երբեք» բառերը։ Այնուհետև նրանք հետևյալ գործողությունները դասակարգում են ըստ խորագրերի.

- Ծառ տնկել է
- Մեծերին օգնել է բույսեր տնկելիս
- Կերակրել է շրջապատում ապրող կենդանիներին
- Ջարդել է ծաղկած ծառերի ճյուղերը
- Քանդել է թռչունների բները
- Պոկոտել է շրջապատի ծաղիկներ
- Քաղել ու կերել է չհասած միրգ

Ժամանակ առ ժամանակ կարելի է հանձնարարել նմանատիպ աղյուսակների լրացում և հետևել, թե ինչպես է փոխվում երեխայի ինքնագնահատումը։

Բնապահպանական կրթությունը ոչ միայն գիտելիքների ձևավորում է, այլ գործնական կարողությունների զարգացում, իսկ ամենալավ միջոցը գործնական աշխատանքների կատարումն է՝ շարունակել ամենամյա ծառատունկը, թափոնների հավաքումը, դրանց երկրորդային մշակումն ու օգտագործումը, շրջապատի մաքրումը, համայնքային կառավարման մարմինների հետ կապերի հաստատումը։ Էկոլոգիա դասընթացի միջոցով սովորողները կարող են իրենք էլ էկոլոգիական գիտելիքներ փոխանցել կրտսեր ընկերներին՝ «Սովորող-սովորեցնող» նախագծով։ Կարողանան տեսնել, գնահատել, կանխել իրենց շրջապատում տեղի ունեցող բնապահպանական խախտումները, դպրոցում ձեռք բերած գիտելիքներն ու հմտությունները փոխանցել ընտանիքի անդամներին և ընկերներին։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրելով էկոլոգիական դաստիարակությունը որպես արժեհամակարգի ձևավորման միջոց հանգեցինք այն եզրակացությանը, որ արդի էկոլոգիական ճգնաժամային իրավիճակում նշանակալի դեր ունի էկոլոգիական կրթությունն ու դաստիարակությունը, որը միջոց է հանդիսանում երկիր մոլորակի կենսոլորտի ինքնակազմակերպման, ինքնակառավարման, ինքնավերականգման բոլոր հատկանիշների երկարատև գոյությունն ապահովելու համար:

Ճշգրիտ արժեհամակարգի ձևավորումը սկսվում է դեռևս մանկությունից, ինչը հղկվում և առաջ է մղվում հենց դպրոցում՝ հիմք դնելով երեխայի մեջ սեր դեպի բնությունը և շրջապատող աշխարհը: Սերը բնության հանդեպ ծնում է մարդասիրական ամենաբարձր զգացումները: Արժեքային համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում: Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն ուսումնական առարկաները՝ տարրական դասարաններում, հատկապես՝ «Ես և շրջակա աշխարհը» առարկան: Դպրոցում սովորողները «Ես և շրջակա աշխարհը» ծրագրի շրջանակներում ծանոթանում են Երկիր մոլորակին, անկենդան և կենդանի բնությանը, պատմամշակութային արժեքներին, էկոլոգիական հիմնախնդիրներին և այլն

Երեխային հարկավոր է նախ ձևավորել ապա ուղղորդել, դեպի ճշգրիտ արժեհամակարգ: Տարրական դպրոցում հիանալի գործիք է հանդիսանում խաղը, այդ ամենը իրականացնելու հարցում. խաղերը կօգնեն երեխաներին հանդես գալ՝ ինքնադրսևորման հավասար պայմաններում, անկաշկանդ միջավայրում, ուր ամեն մեկն իր կարևոր դերակատարումը կունենա: Կրթությունն արդյունավետ դարձնելու համար անհրաժեշտ է կազմակերպել էքսկուրսիաներ, շաբաթօրյակներ, ծառատունկեր և նմանատիպ միջոցառումներ: Կիրառել ժամանակակից տեխնոլոգիաներ, հատկապես ՏՀՏ–ները, որոնց կիրառման շնորհիվ դասը կդառնա առավել արդյունավետ և բովանդակալից, նպաստելով աշակերտների ստեղծագործական ունակությունների ձևավորմանը:

«Ես և շրջակա աշխարհը» ուսումնական առարկան կոչված է օգնելու երեխային ճանաչել իրեն ոչ միայն որպես անհատ, այլև որպես հասարակության մասնիկ: Իսկ եթե մարդը գիտակցի իրեն որպես անհատ, այդ դեպքում կունենանք ձևավորված արժեհամակարգ, կայաուն հասարակություն, հարուստ՝ էկոլոգիապես դաստիարակված անհատներով, ինչը հիմք կհանդիսանա ունենալու հզոր պետություն և խելացի հասարակություն՝ պահպանելով շրջակա միջավայրը տարատեսակ երևույթներից:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. [Գասպարյան Ա., Նախաշավիղ, /4-5/, Բնապահպանական կրթությունը ուշադրության կենտրոնում, Կրթության ազգային ինստիտուտ, 2008թ., Երևան, 128 էջ:]
2. [Գևորգյան Ա., Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիարակության գործընթացում, 2002թ., Երևան, 176 էջ:]
3. [Հովհաննիսյան Ա., Նախաշավիղ /2-3/, Կրտսեր դպրոցականների բնապահպանական դաստիարակության խնդիրները և դրանց իրականացման միջոցները, Կրթության ազգային ինստիտուտ, 2008թ., Երևան, 64 էջ:]
4. [Սուխոմլինսկի Վ. Ա., Սիրտս նվիրում եմ երեխաներին, 1977թ., Երևան, 317 էջ:]
5. [Корчак Я., Избранные педагогические произведения, 1979г., Москва, 458 с.]